մուտք, Զերմեռ կամ Զերմենէ անուան տակ, 55 կիլոմեթր երկարութիւնով: Այստեղ միանալով Կուրդ առուակին, անունը փոխում է Մասսատ վտակի, Մասսատ ձորի եւ աւանի անունով: Ակունքում Զերմեռ վտակը 7000՝ (ոտնաչափ) բարձրութիւն ունի Սեւ ծովից, որը ինքնաց դիմում է արեւմտահարաւ մինչեւ Բայբուրդ եւ 35 կիլոմեթր, կամ ակունքից մինչեւ Բայբուրդ 90 կիլոմեթր: Ակունքից մինչեւ Բայբուրդի հովիտը ձորոխի հունը իջնում է աւելի քան 1000՝ եւ կազմում է ձորոխի նախնական դաւառը-հովիտը, որին այսօր կանչում են Օվաջիկ (Հովտիկ):

2· Ձորոխը Խան-Մատէն գեղից յետոյ, մանելով Բայբուրդի կամ Բաբերտոնի դաշտը, ուղղում է դէպի հիւսիս եւ կոչւում է Ճորոխ կամ ժողովրդական դարձուածով Խելառ-Ճորոխ: Բայբուրդ քաղաքը հասնելուց յետոյ նա դէպի հիւսիս արեւելք է թեքւում կոր գծով, ապա ընդունում է Բալախոռ վտակը: Խան-Մատէնից մինչեւ Խայք եւ Ջինջուլ առուակներն ընդունելը կազմում է ձորոխի երկրորդ դաւառը՝ Բայբուրդի հովիտն ու դաշտը:

3· Բալախոռ վտակը սկսւում է Գիվ, Օթլուկրէլ, Կարադաշ եւ Վավուկ լեռներից, իջնում է Հինդի, Լոռի ձորերից, ոռոգում է Սիւնուր եւ Բալախոռ դաշտը եւ ապա ձախից խառնւում է ձորոխին այնտեղ, ուր ձորոխն